ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/107

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 26.04.2021թ. թիվ 26/26-1/6314-2021 գրությամբ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 20.04.2021թ. թիվ Ե/02/669-21 գրության հիման վրա 26.04.2021թ. թիվ 26/26-1/6314-2021 գրությամբ նախաձեռնել է «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/107 ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.04.2021թ. թիվ Ե/02/669-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից 2021 թվականի մարտի 18-ին հրապարակվել է ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2021/1 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի ապրիլի 2-ին:

Սույն ընթացակարգի համար պահանջվում է ներկայացնել հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ: «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը կցել է Armeps էլեկտրոնային համակարգում, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ:

Կից ներկայացվում է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը, գնահատման թերթիկը, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից Armeps էլեկտրոնային համակարգում կցված հայտի ապահովումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/107 ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/107 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/107 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2021/1» ծածկագրով ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

3. Պատվիրատուի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով ներկայացված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, որի համաձայն «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, գնահատող հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի կողմից ստորագրված չէ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6314-2021 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 20.04.2021թ. թիվ Ե/02/669-21 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետով

սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե ***հայտի ապահովումը*** ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա ***բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև <u>հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա</u> Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:***

Այսպես, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2021/1» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով ներկայացված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, որի համաձայն «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, գնահատող հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի կողմից ստորագրված չէ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 26-րդ կետի կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և ***յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը <u>պարտադիր կարգով</u> ստորագրում են այդ նիստի արձանագրությունը***: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Այսպիսով՝ արձանագրում եմ՝ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված իմպերատիվ պահանջը, այն է՝ գնահատող հանձնաժողովի 15.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, որի համաձայն «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, գնահատող հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի կողմից ստորագրված չէ, մինչդեռ վերը նշված կարգավորման համաձայն՝ յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում, համապատասխան կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ չստորագրված փաստաթուղթը՝ տվյալ դեպքում արձանագրությունը, չունենալով իրավական նշանակություն, չի կարող որևէ հետևանք առաջացնել:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6314-2021 գրությամբ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**